

ՀՀ Սյունիքի մարզպետ Սուրիկ Խաչատրյանի շնորհավորական ուղերձը

Մարտի 8-ի՝ կանանց միջազգային օրվա առթիվ

Սիրելի կանայք,

Ջերմորեն շնորհավորում եմ ձեզ Մարտի 8-ի՝ Կանանց տոնի առթիվ:

Պատահական չէ, որ կանանց տոնը համընկնում է գարնան սկզբի ու բնության զարթոնքի հետ:

Այս օրն ինչքան էլ ջերմ խոսքեր ասենք, միևնույն է, չենք կարող արտահայտել ակնածանքի ու երախտագիտության այն խոր զգացումները, որ կան մեր սրտերում:

Այս տոնը լավագույն հնարավորություն է տղամարդկանց համար՝ ձեզ առանձնակի ուշադրության արժանացնելու, գնահատանքի անկեղծ խոսքեր ուղղելու:

Անփոխարինելի է ձեր դերն ինչպես հայ ընտանիքների պահպանման, այնպես էլ մեր երկրի կայացման ու զարգացման գործում: Դուք, որ միշտ ուժ ու եռանդ եք հաղորդել մեզ, ոգեշնչել ու մղել եք նոր ձեռնարկումների, միշտ եղել եք հայոց օջախները շեն պահողն ու պահպանողը: Վստահ եմ, որ հայապահպան ու ազգապահպան այդ առաքելությունը հայ կանայք այսօր էլ շարունակում են, ինչը նաև երաշխիքն է մեր հարատևման: Ձեզանով են պահպանվում մեր դարավոր ավանդույթները: Ձեր ձեռամբ, նվիրումի, սիրո ու տված դաստիարակության արդյունքում է դարերի վեր ձևավորվել մեր ազգային նկարագիրը:

Մեկ անգամ ևս շնորհավորում եմ բոլորիդ և ցանկանում, որ միշտ լինեք առողջ ու գեղեցիկ, ապրեք լիության ու բարօրության մեջ՝ շրջապատված անսահման սիրով, ընտանեկան ջերմությամբ ու հոգատարությամբ:

Մաղթում եմ ձեզ կանացի երջանկություն և սեր, ձեր ընտանիքներին՝ խաղաղություն ու գարնանային բարձր տրամադրություն:

ՀՀ Սյունիքի մարզպետ

 **Ս. Խաչատրյան**